ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 720-22

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «08» «12» 2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը՝ ի դեմս գլխավոր գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Արմինե Խառատյանի (այսուհետ՝ Պետական մարմին), ով գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը՝** ի դեմս գլխավոր տնօրեն Լևոն Օհանեսյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), ով գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 1165 «Ներդրումների և արտահանման խթանման» ծրագրի 11004 «**Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծրագրերի խթանմանը, իրականացմանը և հետներդրումային սպասարկմանը**» միջոցառումը՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1 Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով Պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով Կազմակերպությանը հատկացնել որոշման 1165 «Ներդրումների և արտահանման խթանման» ծրագրի 11004. «**Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծրագրերի խթանմանը, իրականացմանը և հետներդրումային սպասարկմանը**» միջոցառմամբ նախատեսված գումարից **177,800,000** (մեկ հարյուր յոթանասունյոթ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար (ներառյալ ԱԱՀ-ն), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք Ծրագրի Միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի N 1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ և Պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին Միջոցառումների իրականացման ժամկետները (Միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3 Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին Միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված Միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

3. Մոնիթորինգը

3.1 Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2 Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4 Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5 Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է Պետական մարմնի և Կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ: Մինչև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կազմակերպությունը Պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և հաշվետվությունը:

4.2 Եթե իրականացված Միջոցառումը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պետական մարմինը Պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված Միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում Կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և

Կազմակերպության նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե Պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պետական մարմինը չի ընդունում Պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված Միջոցառումը համարվում է ընդունված և Պայմանագրի 4.2 կետով սահման-ված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պետական մարմինը Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հաշվետու ամսվա փաստացի հաշվարկված ծախսերի վերաբերյալ մինչև հաջորդող ամսվա 5-ը ներկայացված ծախսերի կատարման հայտի և հաշվարկ-բացատրագրի (հավելված N 7), համապատասխան Ծրագրի ծախսերի նախահաշվի (հավելված N 6) և հանձնման-ընդունման ակտի (հավելված N 4) հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսների:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի NN 1 և 5 հավելվածներում նշված Ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում Կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները Պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված Ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Միջոցառման իրականացման արդյունքում Կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5 Պետական մարմնի կողմից Պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պետական մարմնի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային

օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը: Պայմանագրի գործողությունը տարածվում է 2022թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագրի ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը (հավելված N 5):

9.2. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի

լուծելու մասին ծանուցումը Պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը Պետական մարմինն այն ուղարկում է նաև Կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.4. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակով՝ 24 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝	Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	0010,ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011037935	Հ/Հ 1930059757870100
ՀՎՀՀ 02698604	ՀՎՀՀ 02562459
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ	Գլխավոր տնօրեն ԼԵՎՈՆ ՕՀԱՆԵՍՅԱՆ
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
2022 թվականի 12 08 -կնքված
N 720-22 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Ներդրումային ծրագրերի և նախաձեռնությունների ուղեկցում	Միջոցառման շրջանակներում կիրականացվեն աշխատանքներ ներդրումային ծրագրերի և նախաձեռնությունների սահուն մեկնարկի ապահովման, ծրագրի իրականացման ընթացքում առաջացող խնդիրների լուծման, այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացման ուղղությամբ:	Ներդրումային ծրագրերի և նախաձեռնությունների ուղեկցումը ներառում է տվյալ աշխատանքների կամ դրանց մի մասի իրականացում. • Ներդրումային ծրագրերի սահուն մեկնարկ նախնական խորհրդատվության տրամադրում՝ իրավաօրենսդրական դաշտի, ֆինանսական աջակցության ծրագրերի, պետական խթանների վերաբերյալ իրազեկման միջոցով, որի համար օգտագործվում են հետևյալ գործիքները՝ թեժ գիծ, հեռախոսակապ, էլ. փոստ և հանդիպումներ: • Ներդրումային ծրագրերի խնդիրների վերհանում և կարգավորում ներդրումային ծրագրերի և նախաձեռնությունների իրականացման ընթացքում առաջացած խնդիրների վերհանում և օպերատիվ արձագանքում,	Ծրագրերի և նախաձեռնությունների սահուն մեկնարկի, մեկնարկած ծրագրերի անխոչընդոտ ընթացքի ապահովման նպատակով, 50 ներդրումային ծրագրերի և նախաձեռնությունների ուղեկցում, վերջիններիս իրականացման ողջ ընթացքում խորհրդատվության տրամադրման, առկա և կանխատեսվող խնդիրների վերհանման և դրանց լուծման միջոցով:	30 դեկտեմբերի 2022թ.	Մինչև պայմանագրի գործողության ավարտը	53,000.0

			ծառայությունների շրջանակը՝ միտված վերջիններիս մոտ առկա խնդիրների բացահայտմանն ու հնարավոր լուծումների նախանշմանը: Յուրաքանչյուր ընկերությանը կկցվի Հիմնադրամի համապատասխան աշխատակից, ով կլինի մշտական կապի մեջ տվյալ ընկերության հետ, կիրականացնի պարբերական զանգեր և այցելություններ՝ ըստ անհրաժեշտության: Կշարունակվի ծառայությունների մատուցումը նաև 2021թ. թիրախավորված և սպասարկվող շահառու կազմակերպություններին: Հիմնադրամի հետներդրումային սպասարկման ծրագիրը հետապնդում է հետևյալ երեք նպատակները. • Հայաստանում օտարերկրյա ներդրողների գոհունակության բարձրացում • Տվյալ ներդրողների մոտ գոհունակության բարձրացմանը զուգընթաց համապատասխան նախապայմանների ստեղծում՝ վերջիններիս կողմից վերաներդրումներ իրականացնելու համար • Տվյալ ներդրողների մոտ արձանագրված համակարգային խնդիրների հավաքագրմամբ և համապատասխան կառույցներ ներկայացմամբ՝ առավել բարենպաստ գործարար միջավայրի ձևավորում:				

3	Ներդրողների, գործարարների համար նախատեսված ՀՀ գործարար և ներդրումային դաշտը ներկայացնող, ինչպես նաև ոլորտային (ՀՀ տնտեսության ճյուղեր) ուղեցույցների, շնորհանդեսների նախապատրաստում	Այս միջոցառման նպատակն է ներդրողներին ապահովել տեղեկատվությամբ՝ Հայաստանի ներդրումային և գործարար միջավայրի, ներդրումային ներուժ ունեցող ոլորտների և տրամադրվող պետական արտոնությունների վերաբերյալ, գործարար հնարավորությունների վերաբերյալ:	Միջոցառման շրջանակներում նախատեսվում է հետևյալ աշխատանքների իրականացումը՝ տեղեկատվության հավաքագրում, մշակում, դիզայն, այդ թվում՝ մասնագիտական կառույցների և դոնոր կազմակերպությունների աջակցությամբ: Նյութերը կլինեն անգլերեն լեզվով: Նախատեսվում է հետևյալ նյութերի պատրաստումը. 1. Տեղեկատվական տեխնոլոգիաներ 2022 (ոլորտային շնորհանդես - գրքույկ) 2. Գինեգործություն 2022 (ոլորտային շնորհանդես-գրքույկ) 3. Զբոսաշրջություն 2022 (ոլորտային շնորհանդես-գրքույկ) 4. Ներդրումային ուղեցույց 2022 (ուղեցույց գրքույկ) Կիրականացվի 2021թ. ընթացքում նախապատրաստված տեղեկատվական նյութերի թարմացումները:	Հայաստանի ներդրումային և գործարար միջավայրի, ներդրումային տեսանկյունից գրավիչ ոլորտների մասին ներդրողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը միտված թվով 4 տեղեկատվական նյութերի (ուղեցույցներ, շնորհանդեսներ, գրքույկներ) պատրաստում:	30 դեկտեմբերի 2022թ.	Մինչև պայմանագրի գործողության ավարտը	1,600.0
4	Ֆինանսական աջակցության ծրագրերի ("Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցություն" ծրագրի, "կորոնավիրուսի տնտեսական	ՀՀ կառավարության 2020թ. մարտի 26-ի թիվ 357-Լ որոշման համաձայն ֆինանսական աջակցություն ստացած շահառուների մոտ նույն որոշման Հավելվածի 14-րդ կետի համաձայն եռամսյակային մշտադիտարկման իրականացում, ինչպես նաև	• Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 3-րդ միջոցառման շրջանակներում թղթային ստուգման միջոցով կիրականացվի շահառուների վարկի ծախսման ուղղությունների՝ ծրագրի նպատակներին համապատասխանելիության ստուգում: Այդ նպատակով անհրաժեշտության դեպքում տնտեսվարողից և բանկից կպահանջվեն համապատասխան	Ֆինանսական աջակցություն ստացած 30 շահառուների մշտադիտարկման իրականացում:	30 դեկտեմբերի 2022թ.	Մինչև պայմանագրի գործողության ավարտը	1,700.0

	հետևանքների չեզոքացման երրորդ միջոցառում" ծրագրի և այլ ծրագրերի) շրջանակներում աջակցություն ստացած շահառուների մշտադիտարկում	ՆԱԿ կողմից իրականացվող »Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցություն» ծրագրի շահառուների ընթացիկ մշտադիտարկման իրականացում:	փաստաթղթեր, որոնց ստուգման արդյունքում կկազմվի համապատասխան եզրակացություն: • «Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցություն» ծրագրի շահառուների ընթացիկ մշտադիտարկումն կիրականացվի ինչպես թղթային, այնպես էլ այցելությունների միջոցով: Մշտադիտարկման ընթացում կիրականացվի գործարար գաղափարի իրագործելիության, վարկի նպատակայնության, փաստաթղթերի համապատասխանության ստուգում: Այդ նպատակով շահառուներից կպահանջվեն համապատասխան փաստաթղթեր, այդ թվում՝ նաև հարկային հաշվարկներ՝ շրջանառության և աշխատատեղերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն հավաքագրելու նպատակով: Բացի այդ, մշտադիտարկման արդյուքնում կբացահայտվեն շահառուների մոտ գործունեության ընթացքում առաջացած խնդիրները և խոչընդոտները: Կտրվեն համապատասխան խորհրդատվություններ դրանք վերացնելու ուղղությամբ:				
5	Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին գործարար ուսուցողական	Ձեռնարկատիրական հմտությունների զարգացման դասընթացների կազմակերպում ՀՀ	Սկսնակ գործարարների և ՓՄՁ սուբյեկտների համար կկազմակերպվեն և կիրականացվեն Ձեռնարկատիրական հմտությունների զարգացման դասընթացներ: Դասընթացները	98 սկսնակ գործարաների և ՓՄՁ սուբյեկտերի մասնակցության ապահովում դասընթացին:	30 դեկտեմբերի 2022թ.	Մինչև պայմանագրի գործողության	11,300.0

	աջակցության տրամադրում (" Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն" ծրագրի, "կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառում" ծրագրի շրջանակներում)	մարզերի սկսնակ գործարարների և ՓՄՁ սուբյեկտների համար:	կանցկացվեն առցանց և/կամ տեղում խմբային հանդիպումներ կազմակերպելու միջոցով: Դասընթացի կազմակերպման հաջորդականությունն է. • **<u>Հայտերի ընդունում և ստուգում</u>** Կիրականացվի ներկայացված հայտերի նախնական ստուգում ծրագրի չափորոշիչներին համապատասխան, Ծրագրի չափորոշիչներին համապատասխանող հայտատուների հետ կապ կհաստատվի հետագա քայլերի ներկայացման, իսկ ծրագրի չափորոշիչներին չհամապատասխանող հայտատուներին՝ մերժման հիմքերը ներկայացնելու նպատակով: • **<u>Թվային գիտելիքների դասընթացի կազմակերպում</u>** Անհրաժեշտության դեպքում, հայտատուների համար կկազմակերպվեն թվային գիտելիքների բարելավման դասընթացներ, որի բարեհաջող ավարտից հետո մասնակիցները կանցնեն հիմնական դասընթացի փուլ: • **<u>Ձեռնարկատիրական հմտությունների զարգացման դասընթացի (Հիմնական դասընթաց) կազմակերպում</u>** (դասընթացային խմբերի կազմավորում, միջոցառման պոտենցիալ շահառուների և դասընթացի մասնակիցների հետ հետադարձ կապի			ավարտը	

			հաստատում, դասընթացավարների հետ հետադարձ կապի ապահովում, բուն դասընթացային պրոցեսում խմբերի համակարգում): Դասընթացները կիրականացվեն Բիզնես կտավ և/կամ ՆԱԿ-ի կողմից կիրառվող այլ մեթոդաբանություններով (այդ թվում՝ նաև գերմանական CEFE մեթոդաբանությամբ): Դասընթացն իր մեջ կներառի հետևյալ բաղադրիչները՝ բիզնես գաղափարի ձևավորում, մարքեթինգ, ֆինանսական պլանավորում, մենեջմենթ, բիզնեսի իրավական կողմը և այլն: Դասընթացներն ավարտած մասնակիցների կողմից մշակված բիզնես մոդելները կներկայացվեն գնահատող հանձնաժողովի եզրակացությանը: • **<u>Բիզնես մոդելների գնահատման գործընթացի կազմակերպում</u>** Կկազմակերպվի դասընթացն ավարտած և բիզնես մոդել ներկայացված մասնակիցների բիզնես մոդելների գնահատման գործընթացը 2 փուլով՝ բիզնես մոդելների նախնական գնահատման և հարցազրույցների կազմակերպման միջոցով: Կկազմվեն գնահատման արձանագրություններ, որոնց հիման վրա մասնակիցները կտեղեկացվեն իրենց արդյունքների մասին: Հարցազրույցի փուլ անցած մասնակիցները, որոնք հարցազրույցի				

			փուլում կստանան Գնահատող հանձնաժողովի դրական եզրակացությունը, կտեղեկացվեն ֆինանսական աջակցությունից օգտվելու հնարավորության մասին:				
6	Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառման շրջանակներում փաստաթղթերի ուսումնասիրություն, պայմանագրերի պատրաստում, երաշխավորությունների կնքում, ֆինանսավորման համար անհրաժեշտ այլ աշխատանքների իրականացում	Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտերին կտրամադրվի ֆինանսական աջակցություն վարկային երաշխավորությունների տեսքով՝ համապատասխան բյուջետային միջոցների առկայության պարագայում:	Աշխատանքներ կիրականացվեն չափորոշիչներին բավարարող հայտերի՝ ֆինանսավորմանը նախապատրաստման ուղղությամբ (կապի հաստատում շահառուի հետ, երաշխավորության պայմանագրի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրում, համալիր փաթեթի նախապատրաստում և ներկայացնում բանկ): Փաթեթի ամբողջականացման դեպքում կկնքվի երաշխավորության պայմանագիր շահառուի հետ: Արդյունքնում սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտները կստանան առանց գրավի արտոնյալ պայմաններով վարկ:	20 ՓՄՁ սուբյեկտների երաշխավորության պայմանագրերի կնքում	30 դեկտեմբերի 2022թ.	Մինչև պայմանագրի գործողության ավարտը	2,900.0

7	Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակության տրամադրում,	Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող օրենսդրական բոլոր ուղղություններով գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության տրամադրում:	Միջոցառման շրջանակներում սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին կցուցաբերվի գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող օրենսդրական բոլոր ուղղություններով, այդ թվում՝ ընկերությունների հիմնման, արտահանման կարգավորումների, լիցենզիաների և թույլտվությունների ստացման, հարկային և մաքսային արտոնությունների ստացման, հարկային օրենսդրության, սննդի անվտանգության, տեխնիկական կանոնակարգման, Եվրասիական տնտեսական միության, ինչպես նաև Եվրոպական Միության իրավական կարգավորումների վերաբերյալ, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների, էլեկտրոնային հարկային հաշվետվությունների կազմման և ներկայացման և այլ ուղղություններով:	Բանավոր խորհրդատվության տրամադրում 180 սկսնակ գործարարների և գործող ՓՄՁ սուբյեկտներին	30 դեկտեմբերի 2022թ.	Մինչև պայմանագրի գործողության ավարտը	5,500.0
							177,800.0

Պետական մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Հասցե՝

0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

Կենտրոնական գանձապետական գործառնական

վարչություն

Հ/Հ 900011037935

ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝
ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

«Ներդրումների աջակցման կենտրոն»

հիմնադրամ

Հասցե՝

0010,ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930059757870100

ՀՎՀՀ 02562459

Գլխավոր տնօրեն՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆԵՍՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 2
2022 թ.12.08-ին
կնքված N 720-12 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ)

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի համար	
Դրամաշնորհատու կազմակերպություն	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ)

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

2.3 Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.4 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.5 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.6 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են, որոնք օժանդակել են նաև ծրագրի նպատակին հասնելուն:

Հավելված N 3
2022թ. 12 08 -ի կնքված
N 720-22 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ հազար դրամ (առողջական)

Միջոցառման															
հրապարակված նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեմբեր	դեկտեմբեր	
1		2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
		Ծրագրողական սպասարկմանը, ներդրումների խթանման աշխատանքների իրականացմանը, օտարերկրյա ներդրողների ներգրավմանը եւ հետներդրումային սպասարկմանը պետական աջակցության												177,800.0	177,800.0
Ընդամենը														177,800.0	177,800.0

Պետական մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Հասցե՝

0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն

Հ/Հ 900011037935

ՀՎՀՀ 02698604

Գլխավոր դարձուցիչի պարտականությունները կատարող

ԱՐՄԱՆ ԽԱՌԱՏՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ

Հասցե՝

0010,ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930059757870100

ՀՎՀՀ 02562459

Գլխավոր տնօրեն

ԼԵՎՈՆ ՕՀԱՆԵՍՅԱՆ

Կ.Տ.

Հաստատում եմ

Նախարարի տեղակալ՝ Նարեկ Տերյան

Հավելված 4
2022 թ. -ին
կնքված N պայմանագրի

Կատարող

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝
0010,ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930059757870100
ՀՎՀՀ 02562459

Պատվիրատու

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն
Հ/Հ 9000--------
ՀՎՀՀ 02698604

ԱԿՏ №

ՊԱՅՄԱՆԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2022 թ.

Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » «հունվար» 2022 թ.
Պայմանագրի համարը՝
Պետական մարմինը և Կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված № _ _ _ _ _ հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանգրի շրջանակներում Կազմակերպությունը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

Իրականացված միջոցառման							
		արդյունքը		կատարման ժամկետը		վճարման ենթակա գումարը (հազ. ՀՀ դրամ)	վճարման ժամեկտը (ըստ պայմանագրի)
անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց՝

ստորագրություն

Գլխավոր տնօրեն
ԼԵՎՈՆ ՕՀԱՆԵՍՅԱՆ

Ծառայությունն ընդունեց՝

ստորագրություն

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ

Հավելված N 5

2022թ. 12 03 -ի կնքված

N 720-22 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ *ՀՀ էկոնոմիկայի նախարարություն*

Հիմնարկի անվանումը՝ *«Ներդրումների աջակցման կենտրոն Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծրագրերի խթանմանը, իրականացմանը եւ*

Ծրագրի անվանումը

Նկարագրությունը	Միջոցառման ցուցանիշի անվանումը	Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի ընթացքում ընդ որում աճողական տարի քանակը
1	2	3
Ներդրողների սպասարկմանը, ներդրումների խթանման աշխատանքների իրականացմանը, օտարերկրյա ներդրողների ներգրավմանը եւ հետներդրումային սպասարկմանը պետական աջակցություն	Ներդրումային ծրագրերի և նախաձեռնությունների ուղեկցում, հատ	50
	ՀՀ-ում գործող օտարերկրյա ներդրողների հետներդրումային շարունակական սպասարկում, հատ	100
	Ներդրողների, գործարարների համար նախատեսված ՀՀ գործարար և ներդրումային դաշտը ներկայացնող, ինչպես նաև ոլորտային (ՀՀ տնտեսության ճյուղեր) ուղեցույցների, շնորհանդեսների նախապատրաստում, հատ	4
	Ֆինանսական աջակցության ծրագրերի ("Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցություն" ծրագրի, "կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երրորդ միջոցառում" ծրագրի և այլ ծրագրերի) շրջանակներում աջակցություն ստացած շահառուների մշտադիտարկում	30
	Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցության տրամադրում (" Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն" ծրագրի, "կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառում" ծրագրի շրջանակներում), հատ	98
	Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառման շրջանակներում փաստաթղթերի ուսումնասիրություն, պայմանագրերի պատրաստում, երաշխավորությունների կնքում, ֆինանսավորման համար անհրաժեշտ այլ աշխատանքների իրականացում, հատ	20
	Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակության տրամադրում, հատ	180

Պետական մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Հասցե՝

0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն

Հ/Հ 900011037935

ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող

ԱՐԱՐԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ

Հասցե՝

0010,ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930059757870100

ՀՎՀՀ 02562459

Գլխավոր տնօրեն

ԼԵՎՈՆ ՕՀԱՆԵՍՅԱՆ

Կ.Տ.

Հավելված N 7
2022 թվականի 12.03 -կնքված
N 720-22
պայմանագրի

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՅՏ N
ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ
Կազմակերպության անվանումը

1930059757870100
հաշվեհամար

Բաժին 04 Խումբ 01 Դաս 01 Ծրագիր 14
ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

2022 թ.
ԱՄՍԱԹՎ

_____ (ծրագրի անվանումը)

ՀՀ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀՈԴՎԱԾ	ԳՈՒՄԱՐ
ԸՆԴԱՄԵՆԸ			

Առաջին կարգի ստորագրություն՝

Երկրորդ կարգի ստորագրություն՝

Կ.Տ

Ծանուցում՝ Սույն հայտը ուժի մեջ է պահանջվող ֆինանսավորման, սույն պայմանագրի N2 հավելվածով հաստատված ծրագրի կատարման ծախսերի նախահաշվին համապատասխան տրված հաշվարկ-բացատրագրի առկայության դեպքում